

ԱՆԿԱՏԱ ԱՌԻԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի բաժնետերերին և տնօրենների խորհրդին

Մեր կողմից իրականացվել է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Դեկլարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Դեկլարությունը պատասխանատու է ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը դեկլարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ մեր կողմից իրականացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտը իրականացրեցինք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողություններից, ներառյալ՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները նաև ներառում են ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման կանոնների և մեթոդների համապատասխանության, դեկլարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

Հարցի շեշտադրում

Կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ընկերության գործունեության անընդհատության վերաբերյալ ենթադրության հիման վրա: Ինչպես ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների Ծան.1-ում, Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում չի ապահովել բավարար դրամական հոսքեր իր պարտավորությունները կատարելու և գործառնությունները ապահովելու համար, ինչը կասկած է հարուցում վերջինիս գործունեության անընդհատության ապահովման կարողության վերաբերյալ: Նաև, ինչպես ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների Ծան. 1-ում, Ընկերության գործունեության անընդհատության ապահովումը պայմանավորված է վերջինիս մայր ընկերության ֆինանսական օժանդակության շարունակմամբ, Ընկերության ծախսերի կառուցվածքը բավարարելու և կապիտալի համարժեքության նվազագույն պահանջները ապահովելու համար բավարար հասույթ գոյացնելու կարողությամբ: Այս խնդիրների առնչությամբ Ղեկավարության ծրագրերը նույնպես ներկայացված են ֆինանսական հաշվետվությունների Ծան. 1-ում: Ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում որևէ այնպիսի ճշգրտումներ, որոնք կարող են առաջանալ այս անորոշությունների հետևանքների արդյունքում: Մեր կարծիքը ձևափոխված չէ այս խնդրի առնչությամբ:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
29 ապրիլի, 2016թ.



Արփինե Ղևոնդյան
Աուդիտի ղեկավար